966 Տե՛ր, երբ կանչես, Քեզ պիտ օրհնեմ,

1. Տե՛ր, երբ կանչես, Քեզ պիտ օրհնեմ,
Քո գովքը պիտ երգեմ,
Թող անձս պարծենա, Տե՛ր, Քեզնով,
Մեծարե՛ք ինձ հետ Տիրոջը,
Բարձրացնենք Նրա անունը,
Քանզի արժանի է փառքի:

Փառաբանենք մեկտեղ միաբան, ամեն ժամ,
Երբ կանչեցի, Տերն ազատեց ինձ ամեն վտանգից,
Փառաբանենք մեկտեղ, միաբան, ամեն ժամ,
Երգով փառավորենք, մեծարենք Նրան:

2. Ես խնդրեցի Տիրոջը,
Նա պատասխան տվեց ինձ
Եվ ամեն ահ ու վախից ազատեց:
Արդարներն աղաղակում են,
Տերը լսում է նրանց
Եվ ամեն նեղությունից փրկում նրանց:

3. Տերն է իմ զորությունը
Եվ իմ պաշտպանը,
Իմ սիրտը Նրան է հուսացել,
Եվ Նա ինձ օգնություն եղավ:
Իմ սիրտը ցնծում է
Օրհնությունով փառաբանում է: